«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 63-2/03

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 02.03.2021թ. ժամը 15:00

Համաձայն ՀՀ Արդարադատության նախարարությունից 04.11.2020թ-ի թ-վ 28,4/24664 գրությամբ,վերահասցեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝06.11.2020թ. ստացված փաստաբան Արկադյա Գևորգյանի 24.09.2020թ-ի թիվ 62868 դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝քաղաքացի Վրեժ Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների և ներկայցված առարկությունների վերաբերյալ եզրակացության գալու համար՝ ս/թ-ի Մարտի 02-ին,15-00-ին՝ք.Երևան,Արշակունյաց 5 հասցեում, հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձանժողովի անդամ՝ Արմեն Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝ քաղաքացի Վրեժ Սարգսյանի սնանկության գործով պարտատեր՝Գառնիկ Հովհաննիսյանի ներկայացուցիչ՝փաստաբան Արկադյա Գևորգյանը:

Քաղաքացի Վրեժ Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ՝Հենրիկ Մարտիկյանը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմեն Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյան
Հանձանժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը

Դիմումատու՝ քաղաքացի Վրեժ Սարգսյանի սնանկության գործով պարտատեր՝Գառնիկ Հովհաննիսյան և ներկայացուցիչ՝փաստաբան Արկադյա Գևորգյանը պատշաճ ծանուցված էին բայց իրենց ներկայությունը չեն ապահովվել:

Քաղաքացի Վրեժ Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ՝Հենրիկ Մարտիկյանը պատշաճ ծանուցված լինելով երկու օր առաջ ներկայացնելով իր բացատրությունները հայտնել որ իր կողմից այլ ներկայացնելու այլ փաստեր չկան և խնդրել է հանձնաժողովի նիստը անցկացնել առանց իր ներկայության:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝
1. ՀՀ Արդարադատության նախարարությունից 04.11.2020թ-ի թ-վ 28,4/24664 գրությամբ, վերահասցեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝06.11.2020թ. ստացված փաստաբան Արկադյա Գևորգյանի 24.09.2020թ-ի թիվ 62868 դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝քաղաքացի Վրեժ Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը և տեղեկացրեց նիստի մասնակիցների վերաբերյալ առ այն,որ նիստին չեն ներկայացել ոչ դիմումատու քաղաքացի Վրեժ Սարգսյանի սնանկության գործով պարտատեր՝Գառնիկ Հովհաննիսյանը և նրա ներկայացուցիչ՝փաստաբան Արկադյա Գևորգյանը,իսկ սնանկության գործով կառավարիչը,երկու օր առաջ անձամբ հանձնաժողովին ներկայացրել է իր լրացուցիչ բացատրություն-առարկությունները և այլ փաստաթղթեր և խնդրել է նիստը անցկացնել առանց իր ներկայության:

Հանձնաժողովի նախագահն խնդրեց հանձնաժողովի ներկա անդամներից հայտնել կարծիքներ առանց դիմումատուի և սնանկության գործով կառավարիչի նիստը շարունակելու վերաբերյալ, հայտնելով այն կարծիքը որ և դիմումատուի և կառավարչի կողմից ներկայացվել է բացատրություններ-առարկություններ և համապատասխան փաստաթղթեր,որոնք իր կարծիքով հնարավորություն կտան ձևավորելու կարծիք եզրակացության գալու համար:

Հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը հայտնեց այն կարծիքը,որ հաշվի առնելով որ այս դիմումով եզրակացության գալու համար արդեն երրորդ նիստն է որ հրավիրվում է և նախորդ երկու նիստերում լսվել է և դիմումատուի անձամբ կարծիքը և նրա փաստաբանի կարծիքը և սնանկության գործով կառավարչի կարծիքը,միասին և առանձին առանձին և նախորդ նիստում եզրակացություն չի կազմվել միայն հանձնաժողովի քվորում չլինելու պատճառով,որը ներկայումս առկա է,ուստի ինքը առաջարկում է սկսել նիստը առանց դիմումատուի և առանց սնանկության գործով կառավարչի մեկ անգամ ևս ուսումնասիրել ներկայացված նյութերը և գալ եզրակացության:

Հանձնաժողովի մնացած անդամները համաձայնեցին այդ կարծիքի հետ:

«ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի ներկա անդամները քննարկեցին և որոշեցին, որ սկսել նիստը առանց դիմումատուի և սնանկության գործով կառավարչի ,ուսումնասիրելով կառավարչի և դիմումատուի ներկայացրած փաստական հանգամանքները և համպատասխան փաստաթղթերը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը հանձնաժողովի անդամներին ներկայացրեց ստացված գործի նյութերը,հակիրճ ներկայացնելով բողոքը մասնավորապես նշեց,որ բողոքում նշված փաստերով բողոքաբերը փորձել է ապացուցել կառավարչի և պարտապանի գործողություններից բխած իրավիճակը, ըստ որի պարտատերը իրենց պահանջների արդեն շուրջ երեք տարի,չստանալու փաստը,որի պատճառով էլ նրանք կրում են վնասներ արդեն տարիներ,իսկ կառավարչի կողմից կոնստրուկտիվ գործողություններ չեն կատարվում պահանջների բավարարման ուղղությամբ:

Նախագահն ներկայացրեց նաև ՀՀ Արդարադատության Նախարարության Վերահսկողական ծառայության պետի 04.11.2020թ-ի գրությունը,որով ծառայությունը ԻԿԿ-ին է վերահասցեյագրում դիմում-բողոքը և ներկայացնում է նաև բողոքին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզված իր վերլուծությունները:

Մասնավորապես անհասկանալի է այն փաստը որ կառավարչի կողմից աճուրդից հանված վիճելի գույքերի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարագայում մինչ օրս դատարան չի ներկայացվել միջնորդություն այդ գույքերի կազմի փոփոխության հիմքով նրանց հրապարակային սակարկություններով իրացնելու թույտվությունը դադարեցնելու վերաբերյալ և երկրորդ անհասկանալի է թե կառավարիչը ինչու պարտապանի միջոցների ավելացման միջոցառումների շրջանակներում չի փորձել բենզալցակայանի օգտագործման համար օգտագործողից դրամական միջոցներ ստանալ և ինչու միջոցներ ձեռք չի առել այդ գույքի նկատմամբ օգտագործողի իրավունքները դադարեցնել:

Հանձնաժողովի նախագահն խնդրեց անդամներին կարծիքներ հայտնել :

Հանձանժողովի անդամ՝ Արմեն Աղամյանը հայտնեց այն կարծիքը,որ դիմումը կարդալուց ստանում ես այն տպավորությունը որ դիմումատուն անտեղյակ է վարույթի ընթացքից ցավում է իր կրած վնասների համար և շահագրգռված է իր պահանջի շուտափույթ բավարարմաբ և դրա համար հետևում է աճուրդներին և անհամբեր սպասում է բաշխման ծրագրին,որով կբավավարվի իր պահանջները,բայց ծանոթանալով ստացված փաստաթղթերին և լսելով դիմումատուի և նրա փաստաբանի դատողությունները և այն գործողությունների շարանին որ նրանք ի կատար են ածել հասկանում ես,որ նրանք անտեղյակ չեն վարույթի ընթացքին ու ընթահակառակը քաջատեղյակ լինելով փաստերին,դրանք անտեղյակության քողի տակ բողոքի տեսքով հրամցնում են փաստերին անծանոթ տարբեր իրավասու մարմիններին և փարձում են որևէ տեղից ստանալ ինչ որ որոշումներ որտեղ կառավարչի կամ պարտապանի համար կլինի անբարենպաստ որևէ կետ,որը հետագայում կոգտագործվի նրանց կողմից,որպես գործիք կամ շանտաժի միջոց,իրենց նպատակներին հասնելու համար, այս պարագայում այդպիսի մարմին է հանդիսանում ՀՀ Արդարադատության Նախարարությունը և ՍԳԿԿ ԻԿԿ-ն՝հանձինս Կարգապահական հանձնաժողովի:Հանձնաժողովի անդամի կարծիքով այն բոլոր փաստերը որոնք նշել է դիմումատուն,նա արդեն պատասխաններ ստացել է այլ մարմիններից՝ՀՀ Սնանկության դատարանից և ՀՀ Ոստիկանությունից և նրանք արդեն մանիպուլացնում են այդ պատասխանները իրար դեմ և ցանկություն ունեն նաև այդ մանիպուլյացաներին միացնել նաև Հանձնաժողովի եզրակացությունը,ԻԿԿ Որոշումը և Նախարարության դիրքորոշումը:

Հանձանժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը նշեց,որ ինքը համակարծիք է այդ կարծիքի հետ և ուսումնասիրելով նյութերը և լսելով կողմերի ներկայացրած փաստական հանգամանքները,ստանում է այն կարծիքը,որ կողմերը լավ ճանաչելով իրար,նախկինում իրար հետ ֆինանսական գործարքներով եկամուտ ստացած մարդիկ,ամեն կերպ ցանկանում են իրար վնաս տալ,իսկ պարտատերը իր փաստաբանի հետ միասին այդ գործողությունները զանկանում են կատարել կառավարչի միջոցով,ով գործելով օրենքի շրջանակներում չի տրվում կողմնակալության,իսկ կողմը իր դիմումների և բողոքների միջոցով նպատակ է հետապնդում կառավարչին դրդել ապորինի գործողությունների,որը մասնավորապես կարող է հանդիսանալ ՀՀ «Սնանկության մասին» օրենքի 95-րդ հոդված խախտումը:

Հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը հայտնեց այն կարծիքը,որ պարտատեր կողմը իր փաստաբանի հետ միասին ամեն կերպ մատնացույց են անում պարտապանի սնանկության վարույթի ընթացքում ստացված եկամուտները կամ հնարավոր եկամուտները և փորձում են այդ եկամուտների ստացումը կապել կառավարչի անգործության հետ,անուղակի և ուղակի կարգով կապելով դա հանցավոր անգործության հետ,իսկ կառավարիչը թողնելով իր բնականոն գործունեությունը ստիպված է տարիներ շարունակ պետական և դատական մարմիններում ապացուցել իր գործողությունների ճշտությունը և օրենքներին համապատասխանությունը,որը ներկայացված փաստական հանգամանքների ուսումնասիրություններից պարզ է:Հանձնաժողովի անդամը նշեց նաև,որ ինքը համաձայն է այն մտքին որ պարտատերեը մանիպուլացնում է փաստական հանգամանքները իր օգտին որը իրականությանը չի համապատասխանում միայն այն պարզ պատճառով,որ պարտապանը հոժարակամ իր ներկայացրած առողջացման ծրագրով,ցուց տալով իր եկամուտները,ցանկացել է դրանց մի մասը ուղղել պարտքերի մարմանը,որը մերժվել է դատարանի կողմից և հենց նույն պարտատիրոջ և նրա փաստաբանի դեմ լինելու պատճառով և դրանից հետո նույն կողմը հաշվարկներ է կատարում այդ նույն առողջացման ծրագրի նյութերը օգտագործելով և դրանց հիման վրա փորձում է ցույց տալ կառավարչի անգործությունը կամ հանցավոր անգործությունը:

Ինչ վերաբերվում է բենզալցակայանի ստացված եկամուտների,ապա պետք է նշել,որ բենզալցակայանի սարքավորումները պատկանում են այլ Ա/Ձ-ի և այդ գույքով եկամուտ է ստանում դրա սեփականատերը,որը բացի հողամասի օգտագուծումից,այլ կապ չունի սնանկության վարույթի հետ,իսկ հողամասի վարձակալության պայմանագրի լուծումը կառավարչի կողմից ոչ մի էական օգուտ վարույթին չի տալու,բացի կողմերի,այդ թվում պարտապանի և վարձակալի,պարտապանի և կառավարչի կոնֆլիկտային հարաբերություն-

ների ստեղծմանը,որը միայն օգուտ է պարտատեր-դիմումատու հանդիսացող անձին,որին և ձգտում են նրանք իրենց գործողություններով:

Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը նույնպես համաձայնելով արտահայտած կարծիքներին,անդրադարձավ կառավարչի հրապարակային սակարկությունների չդադարեցման փաստին և նշեց,որ կառավարչի կողմից հրապարակային սակարկությունների վերաբերյալ թույլտվություն ստանալուց հետո,գույքերի մի մասի վերաբերյալ,պարտապանի ամուսնու կողմից ստեղծվել է վեճի առարկա դրանց սեփականության հետ կապված,որի դատական և հետագայում բողոքների քննարկումների ընթացքում կառավարիչի ,աճուրդների դադարեցման համար,դատարան չդիմելու փաստը կարելի է հասկանալ և ընդունել,քանի որ դեռ պարզ չէր գույքի պատկանելիության հարցը և պարզ չէր գույքի կացմը կփոփոխվեր թե ոչ,բայց ուշադրության է արժանի այն փաստը,որ դատական ակտերի ուժի մեջ մտնելուց հետո,երբ արդեն,ըստ դատական ակտի,աճուրդի դրված գույքերի կացմերը փոփոխվել են և ավելին,կառավարիչը ստիպված արդեն պետք է դատական կարգով որոշի գույքերի բաժանելիության հարցերը,այդ պարագայում էլ կառավարչի կողմից չի ներկայացվել միջնորդություն դատարան,հրապարակալին սակարկությունները այդ գույքերի մասով դադարեցնելու համար,որը և սպասելիքներ է առաջացրել պարտատիրոջ մոտ:Կառավարչի կողմից սույն փաստը բացատրվել է,որ այդ միջնորդության կարիքը ինքը չի կարևորել,քանի որ գույքի կազմի փոփոխության դատական ակտերը կայացրել է նույն դատարանը և նույն դատավորը և նա քաջատեղյակ էր այդ մասին,որին քաջատեղյալ էր նաև դիմումատու պարտատերը և սպասելիքներ չպիտի ունենար:

Հանձնաժողովի նախագահն նշեց,որ այո ինքը կարող է համաձայնել,որ այդ միջնորդությունը չներկայացնելը ըստ էության ազդեցություն չի ունեցել սնանկության վարույթի ընթացքի վրա, բայց դա իրավական առումով պռոցեդուրային խախտում է և կարող էր ազդել մնացած պարտատերերի և կողմերի իրավունքների իրացման վրա,որպիսի գործողությունների հետագա բացառումների համար հանձնաժողովի նախագահն առաջարկեց հայտարարել սնանկության գործով կառավարիչ՝Հենրիկ Մարտիկյանին գրավոր նախազգուշացում:

Հանձնաժողովի անդամները լսեցին և քննարկեցին կարծիքները և հանձնաժողովի նախագահն հարցը դրեց քվեարկության

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՝

1. ՀՀ Արդարադատության նախարարությունից 04.11.2020թ-ի թ-վ 28,4/24664 գրությամբ, վերահասցեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝06.11.2020թ. ստացված փաստաբան Արկադյա Գևորգյանի 24.09.2020թ-ի թիվ 62868 դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով՝ քաղաքացի Վրեժ Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանի գործողությունների /անգործության/օրենքին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդին «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 կետի 5-րդ ենթակետի հիմքով՝ քաղաքացի Վրեժ Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Հենրիկ Մարտիկյանին հայտարարել բացահայտված խախտումը վերացնելու վերաբերյալ նախազգուշացում և հանձնարարել կառավարչին արդյունավետ իրականացնել «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված լիազորությունները,ապահովվելով սնանկության վարույթի իրավական ճիշտ ընթացքը և թափանցիկությունը :

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյան